ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք,
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6, Հեռ. (0222) 57070 ,
ptghni.kotayq@mta.gov.am

N 59
21 փետրվար 2020թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջների, Ձեզ է ուղարկվում Պտղնի համայնքի ղեկավարի 2020 թվականի N 1-10 որոշումները:
Առդիր 10 ֆայլ:

21-Feb-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Մ. Պետրոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 1

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 17-րդ հոդվածի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. 2020 թվականի հունվարի 20-ին ժամը 15^{00}-ին Պտղնիի համայնքապետարանում հրավիրել համայնքի ավագանու արտահերթ նիստ, հետևյալ օրակարգով՝

1) Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 55-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2) Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

16-Jan-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. հունվարի 16
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՀՈՒՆՎԱՐԻ 2020թվականի N 2

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 30-րդ մասի պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2012 թվականի փետրվարի 13-ի ««Հողաչափ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Պտղնի համայնքի հողերի գոտիավորման և օգտագործման սխեման հաստատելու մասին» N 5 և 2020 թվականի հունվարի 20-ի «Քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին» որոշումները, քաղաքացիների դիմումները՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզ գ. Պտղնի 23-րդ փողոց թիվ 6 հասցեում գտնվող Հռիփսիմե Գագիկի Թարխանյանին սեփականության իրավունքով պատկանող (ծածկագիր 07-054-0332-0006) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, արդյունաբերական օբյեկտների 0.5 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման, համաձայն համայնքի գոտիավորման և օգտագործման սխեմայի:
2. Կոտայքի մարզ գ. Պտղնի 23-րդ փողոց թիվ 8 հասցեում գտնվող Վալերի Նորայրի Նավասարդյանին սեփականության իրավունքով պատկանող (ծածկագիր 07-054-0332-0007) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների 0.5 հա հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման, համաձայն համայնքի գոտիավորման և օգտագործման սխեմայի:
3. Նշված փոփոխությունները ներառել համայնքի հողերի ընթացիկ տարվա հաշվեկշռում:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

22-Jan-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. հունվարի 22
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 3

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի N 550-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 13-ի N 56 որոշումը, կից սեփականատերերի փաստացի օգտագործությունը և դիմումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ օտարվող հողամասերը հնարավոր չէ օտարել որպես առանձին միավոր աճուրդային կարգով՝ ***որոշում եմ.***

1. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.23243 հա (սեփականության վկայական N 06122019-07-0141, ծածկագիր 07-054-0308-0064) գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն ուղղակի վաճառքով ձևով, ընդլայնման նպատակով օտարել կից հողամասի (1.1005 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայր, սեփականության վկայական N 24092019-07-0021, ծածկագիր 07-054-0308-0057) սեփականատեր Աղասի Յուրիկի Գաբրիելյանին (նույնականացման քարտ 008758898, տրված 30.05.2016թ., 004-ից) ամբողջ կադաստրային արժեքով (15700 ՀՀ դրամ) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար:
2. Համայնքային սեփականություն հանդիսացող 0.34612 հա (սեփականության վկայական N 02122019-07-0088, ծածկագիր 07-054-0327-0041) գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքն ուղղակի վաճառքով ձևով, ընդլայնման նպատակով օտարել կից հողամասի (1.53 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք, սեփականության վկայական N 03072018-07-0046, ծածկագիր 07-054-0327-0016) սեփականատեր Սաթենիկ Ջորիկի Գալստյանին (անձնագիր AS0249553, տրված 28.06.2018թ., 019-ից) ամբողջ կադաստրային արժեքով (23400 ՀՀ դրամ) գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Պտղնի համայնքի ղեկավարի 2019 թվականի դեկտեմբերի 23-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ընդլայնման նպատակով ուղղակի վաճառքի ձևով օտարելու մասին» N 126 որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

05-Feb-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. փետրվարի 05
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 4

ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ, ՀԱՆՐԱՅԻՆ ՄՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջների, հիմք ընդունելով «ՕԱԶԻՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ ***որոշում եմ.***

1. «ՕԱԶԻՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ին տալ 21-րդ փողոց թիվ 1 հասցեում գտնվող «Բելլաջո» ռեստորան-հյուրանոցում ոգելից և ալկոհոլային խմիչքների, ծխախոտի արտադրանքի իրացման, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2020 թվականի 1-ին եռամսյակի համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

05-Feb-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. փետրվարի 05
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 5

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Լյուդմիլա Պյոտրի Հովհաննեսյանի դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 4-րդ թաղամաս թիվ 14 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում (կոդ 07-054-0303-0005) 2017-2018 թվականներին ինքնակամ կառուցված շինությունները: Համայնքի կադաստրային քարտեզի, որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերի, տեղում կատարված ուսումնասիրությունից պարզվեց, որ Լյուդմիլա Պյոտրի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով (սեփականության վկայական N 2375079) պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 4-րդ թաղամաս թիվ 14 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում 2017-2018 թվականներին ինքնակամ կառուցվել է 86.52 քմ մակերեսով այգետնակ, 11.0 քմ մակերեսով օժանդակ շինություն, 77.76 քմ մակերեսով ծածկեր և 12.84 քմ մակերեսով պարիսպ:

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9; 10; 11; 13 կետերի պահանջների, հիմք ընդունելով որակավորված անձի կողմից գծված շինությունների և հողամասի հատակագծերը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լյուդմիլա Պյոտրի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գ. Պտղնի Պտղնի-1 այգետարածք 4-րդ թաղամաս թիվ 14 հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում

հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Քաղաքացի Լյուդմիլա Պյոտրի Հովհաննեսյանին սեփականության իրավունքով պատկանող 2017-2018 թվականներին կառուցված 86.52 քմ մակերեսով այգետնակը, 11.0 քմ մակերեսով օժանդակ շինությունը, 77.76 քմ մակերեսով ծածկերը և 12.84 քմ մակերեսով պարիսպը համարել օրինական:
2. Պարտավորեցնել քաղաքացի Լյուդմիլա Պյոտրի Հովհաննեսյանին 2017-2018 թվականներին կառուցված շինությունների համար համայնքային բյուջե 900105225214 հաշվեհամարին վճարել 367540 (երեք հարյուր վաթսուն յոթ հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ և 72950 (յոթանասուն երկու հազար ինն հարյուր հիսուն) ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
4. ՈՒԺԸ կորցրած ճանաչել Պտղնի համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 01-ի «Ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման մասին» N 101 որոշումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

12-Feb-20

X _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. փետրվարի 12
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 6

ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման կարգը հաստատելու մասին» 1066-Ն որոշման N1 հավելվածով հաստատված կարգի 7-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով սեփականատիրոջ դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ամուր Ավակյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության վկայական N 18112019-07-0118, ծածկագիր 07-054-0308-0069) 0.203156 հա գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը փոխադրել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նշանակության արոտավայրի:
2. Սույն փոփոխությունը ենթակա է գրանցման Հայաստանի Հանրապետության ԱԳԿ ՊԿԱ մարզերի միավորված ստորաբաժանման կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

12-Feb-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ

2020 թ. փետրվարի 12
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 7

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 11-րդ հոդվածի, 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 82-րդ հոդվածի 7-րդ մասի և 84-րդ հոդվածի 2-րդ մասի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջների, հիմք ընդունելով Պտղնի համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 12-ի N 15-Ն որոշումը՝
որոշում եմ.

1. 2020 թվականի մարտի 02-ին Պտղնիի համայնքապետարանի շենքում հրավիրել հանրային բաց լսումներ՝ Պտղնի համայնքի ղեկավարի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և 2019 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ:
2. Հաստատել Պտղնի համայնքի ղեկավարի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և 2019 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Հանրային քննարկման ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի անդամ՝ Գայանե Սուրենի Բելլույանին:
4. Պտղնիի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Մարատ Տարիելի Պետրոսյանին՝

1) համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել Պտղնի համայնքի ղեկավարի 2019 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության և 2019 թվականի համայնքի զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել

համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար։
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից։

13-Feb-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. փետրվարի 13
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 8

ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌՆԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների՝ ***որոշում եմ.***

1. 2020 թվականի ապրիլի 05-ին կայանալիք Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների հանրաքվեի «ԱՅՈ» և «ՈՉ» քարոզչության կողմերի կողմից քարոզչական պաստառներ փակցնելու համար Պտղնի համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

1) Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 6, 1.5քմ.

2) Կոտայքի մարզ գ. Պտղնի 1-ին փողոց թիվ 27, 1.5քմ.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

14-Feb-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. փետրվարի 14
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 9

ՄՈՒՇԵՂ ԳՈՆՉՈՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման պահանջների, հիմք ընդունելով քաղաքացիու դիմումը և լիցենզավորված ճարտարապետի կողմից գծված նախագծի առկայությունը՝ ***որոշում եմ.***

1. Մուշեղ Սամվելի Գոնչոյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզ Պտղնի համայնք 17-րդ թաղամաս թիվ 23 (կադաստրային ծածկագիր 07-054-0118-0010, սեփականության վկայական N 25092017-07-0080) հասցեի բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում բնակելի տան և պարիսպի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվություն:
2. Հանձնարարել Մուշեղ Սամվելի Գոնչոյանին շինարարական աշխատանքներն իրականացնել քաղաքաշինական փաստաթղթերին համապատասխան:
3. Շինարարական աշխատանքները սկսել տեղական տուրքը վճարելուց հետո:
4. Շինարարական աշխատանքները սկսելուց առաջ եռօրյա ժամկետում համայնքապետարան ներկայացնել տեղեկանք Ձև N 5-ը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

20-Feb-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. փետրվարի 20
գ.Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պտղնի համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պտղնի, 1-ին փող. 6
(0222) 57070, ptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 10

ԱԼԻՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՇԱՐԺԱԿԱՆ ՏՆԱԿ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջների, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Ալինա Աշոտի Գաբրիելյանին տալ սեփականության իրավունքով իրեն պատկանող Կոտայքի մարզի Պտղնի համայնքում գտնվող (կադաստրային ծածկագիր 07-054-0308-0052) գյուղատնտեսական նշանակության հողամասում շարժական տնակ տեղադրելու թույլտվություն:
2. Շարժական տնակը տեղադրել տեղական տուրքը վճարելուց հետո:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

21-Feb-20

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՌԱՔԵԼ ՎԻՐԱԲՅԱՆ**

2020 թ. փետրվարի 21
գ.Պտղնի